


1913 № 2130.

68

ՏՊԵՐԱԿԱ
ԻՆՏԻՏՈՒՏ
ՅԵՏՅՈՒՆԱԳՐԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՍՍՏՐ



ԿՐԿԱՆ
ԻՍՏԱՆ



Ր Ա Ֆ Ֆ Ի

ԿԱԶՄԵՑ ԱՐՏԷՄ (ՅԱՐՈՒԹԻՒՆ) ԵՍԱՅԵԱՆ

arm
6168

6 NOV 2011

ԱՐՏԻՄ (ՅԱՐՈՒԹՅՆՆ) ԵՐԱՅԵԱՆ

БИБЛИОТЕКА

391.99-092 րաճճի
Ս-58

ИНСТИТУТ
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ր Ա Ֆ Ֆ Ի

ՆՐԱ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

(Համառոտ հանրամատչելի տեսարիւն)

Սեկորդ պատգուրիւն



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԽԱ» Մուգէլյի պեր. № 8
1913

71.373

08 APR 2013

ՀՀ
ՀՀ
ՀՀ

Հ
Ճ
Ճ
Ս
Ս



Ի Կ Ֆ Ֆ Ի



59500-66

ընդունակ և սրամիտ է, մտածում է ուղարկել Թիֆլիս, աւելի մեծ ուսում ստանալու, որ գայ և իրան պէտք գայ առևտրական գործերում:

1852 թվին նա ուղարկում է փոքրիկ Յակոբին Թիֆլիս քաղաքը և յանձնում Բէլախեանց ազգանունով մի ուսուցչի մասնաւոր ուսումնարանը: Այստեղ էլ Բաֆֆին իր լաւ վարք ու բարքի և ընդունակութեան շնորհիւ շատերի ուշադրութիւնը գրաւում է. ուսարիյետոյ Յակոբին տալիս են գիմնագիտ: Նա մեծ շանասիրութեամբ շարունակում է ուսանել, միևնոյն ժամանակ հետաքրքրվելով զանազան կլասիկ հեղինակներով: Օրինակ նա շատ էր գրաված Հոմերոսի Իլիականով ու Ոդիսականով, Օվիդիոսի և Վիրգիլիոսի գրվածքներով, և յետագաներում ուսումնասիրում էր Ժորժ-Չանդի, Էօփէն-Սիւրի, Ալ. Դիւմայի, Հիւգօյի և ուրիշների գրվածքները:

Բայց հայրը լինելով ծեր վաճառական և նուիրված իր գործին, 1857 թվին Յակոբին հանում է գիմնագիտայի 5-րդ դասարանից և տանում է գիւղ ու ստիպում վա-

ճառականութեամբ զբաղվել և իրան օգնել: Սակայն երիտասարդ Յակոբի մէջ եղած ձգտումը դէպի ուսումը և կրթութիւնը հանգիստ չեն տալիս նրան: Վաճառականական չոր ու ցամաք հաշիւները, առևտուրի պարտաւորական ձևերը, սնունդ չեն մատակարարում նրա շրջահայեաց ու բեղմնաւոր ուղեղին: Նա իր համար մի փոքրիկ գրադարան է կազմում և սկսում ուսումնասիրել եղած գրքերը: Փոքր ինչ յետոյ նա թողնելով վաճառականութիւնը, սկսում է ճանապարհորդել Թիւրքիայի և Պարսկաստանի զանազան գաւառներում — Վան, Տարօն, Մուշ, Դիլան, Աօյ, Ուրմի, Թաւրիզ և այլն... հետաքրքրվելով և ուսումնասիրելով պատմական նշանակութիւն ունեցող տեղերն ու մնացորդները: Եւ իզուր չէ անցնում այս առաջին ճանապարհորդութիւնը: Նա հրատարակում է իր տպաւորութիւնները 1860 թ. «Հիւսիսափայլում» Աղթամարայ վանք վերնագրով, որը մի իրական նկարագրութիւն է թէ տեղի և թէ հոգևորականութեան նիստ ու կացի: Սա թէև մի յաջող գրվածք չէ, բայց այնուամենայնիւ

իր մէջ արտացոլեցնում է սկսնակ գրողի ապագայ փառաւոր գործունէութեան սկիզբը:

Ապանա շարունակ հետաքրքրվում է օտար գրականութեամբ, կարգում է ու զարգանում: Հետզհետէ սկսում է աշխատակցել ժամանակի հայոց թերթերին, թագցնելով իսկական ազգանունը և ստորագրելով «Րաֆֆի» ու «Մելիքզադէ» ծածկանուններով: Զանազան աննպաստ, ծանր հանգամանքները հարկադրում են Րաֆֆուն նորից վաճառականութեամբ զբաղվել: Ապա ուսուցչութիւն է անում Վերին ազուլիսում, Թաւրիզում, Թիֆլիսում և այլ տեղերում: Միևնոյն ժամանակ չքաւորութիւնը ստուերի նման հետևում էր երիտասարդ ուսուցչին և գրողին, և մի ժամանակ էլ այն աստիճան, որ Րաֆֆին ստիպված է լինում իր կոչումից ստոր պաշտօն յանձն առնել:

Ինչո՞ւ թագցնեմ, պատմում է Րաֆֆին իր բարեկամ ծանօթ պ. Ա. Աւթանդիլեանցին, — ես այն աստիճան հացի կարօտ մնացի թիֆլիսում, որ օրվայ կարիքն ինձ ստիպեց մի հասարակ գործակատարի պաշտօնը դռնել մի մագազինում, այն էլ ո՛չ թէ

իսկական գործակատարի, այլ պարզապէս մի դուքանչու աշակերտի պաշտօն, մի չընչին ոռճիկով: Օրվայ հացս գտնելու համար յանձն առայ այդ ստորութիւնը...: Մագազինում պատրաստի հագուստներ էինք վաճառում. ես շորերը հագցնում էի յաճախորդներին, քղանցքներից բռնելով, քաշըշելով յարմարացնում էի և սոււ գովարանութիւններ էի անում, որ մուշտարուն ձեռիցս չը փախցնեմ: Մի անգամ մի երիտասարդ ծանօթի միքանի իրեղէններ նիսիա էի վաճառել. այդ օրը քիչ էր մընում որ ինձ մագազինից դուրս վճնդէին: Ա՛խ, ի՞նչ զգուելի պաշտօն էր այդ և որքան անտանելի...»: Այնուհետև, երբ նա ծանօթանում է Գրիգոր Արծրունու հետ նրա գրութիւնը փոքր ինչ բարւոքվում է:

Րաֆֆիի մաքի առաջադիմութեան զարկ է տալիս Արծրունին — ժամանակակից յայտնի հրատարակախօսը և գործիչը: Ինչպէս ինքը՝ Գրիգոր Արծրունին ասում է, 1871 թուին նոր էր իրաւունք ստացել «Մշակ» անունով թերթ հրատարակելու, երբ Սենեքերիմ Արծրունու միջնորդութեամբ ծանօ-

Թանուժ է Բաֆֆու հետ, որը հենց առաջին անգամից լաւ տպաւորութիւն է թողնում նրա վրայ: Ապա սա՛ Արծրունին՝ հրաւիրում է Բաֆֆուն աշխատակցելու իր թերթին: Այս ժամանակից սկսած մինչև 1885 թուականը Բաֆֆին «Մելիքզադէ» և «ԲաՅֆի» անուններով մասնակցում է «Մշակին», միաժամանակ աշխատակցելով «Աղբիւրին» ապա «Արձագանքին», «Փորձին», տալով վիպական, ճանապարհորդական, նկարագրական ու հրապարակախօսական յօդուածներ:

1874 թուին Անդրէաս Յովհաննիսեանց եպիսկոպոսը՝ նշանակվելով Ատրպատականի թեմակալ առաջնորդ, սկսում է ուշադրութիւնը կենտրոնացնել Թաւրիզի հայոց թեմական դպրոցի վրայ, նրա կրթական ծրագիրը ընդլայնելով ու ճոխացնելով: Հրաւիրում է նոր ուսուցիչներ, ի միջի այլոց և Բաֆֆիին: Հենց ուսուցչութեան ասպարիզում նա սկսում է եռանդուն գործունէութիւն ցոյց տալ, նոր սերնդին կրթել ազնիւ ոգով, նորանոր իզէալներ ներշնչել: Այդ ժիր, գաղափարական ուսուցիչը, չը

նայելով որ ցերեկային դպրոցական աշխատանքներից յոգնած էր լինում, այնուամենայնիւ գիշերները անխոնջ աշխատում էր գրելով ու հեղինակելով: Աստիճանաբար խաւարամիտ մարդկանցից կազմվեց նրան ընդմիտդիր լէզէօն, որ ամեն կերպ սկսեց հալածել նրան, և վերջ ի վերջոյ յաղթանակը տարաւ, հեռացնելով Բաֆֆիին ուսուցչութեան պաշտօնից: Անողոք ճակատագրից զրոյնների համար սահմանած տրկարութիւնը—կրճաքաւը՝ վաղաժամ երեւան է գալիս նրա օրգանիզմի մէջ և սկսում մաշել:—«Թէև իմ կուրծքս իմ գերեզման իջնելու սանդուխքներն է պատրաստում, ասում է նա իր վերոյիշեալ ընկերակցին,—բայց ինձ թւում է, որ գեռ միքանի տարիներ էլ կ'ապրեմ: Ինձանում արդէն մտմին ու միս է դարձել գրելը՝ որ իմ առողջութիւնն աւելի է խախտում, բայց ես չեմ կարող իմ միանգամ սկսածը բաց թողնել: Մեր նոր սերունդն ընթերցանութեան գրքերը չ'ունի, ասում է նա.—անցել է «Երազանան» և «Պղնձէ քաղաքի» ու դրանց նրան գրքերով պարապելու ժամանակը. ես

մեր նոր սերնդին ուշագրաւ ու միտք մշակող նոր վէպեր, նոր պատմական վէպեր պէտք է տամ, որքան էլ կը ներեն իմ ոյժերը. թող աւելի բարձր գրվածքները, բարձր վէպերը գրեն նրանք, որոնք աւելի բարձր ուսում են ստացել...»:

Համաշխարհային գրականութեան պատմութիւններէ շերտում անշեղ կերպով սկզբից մինչև վերջ առաջ է գնում այն դառն իրականութեան պատմութիւնը, — որ բոլոր ազգերի մէջ ամեն մի բեղմնաւոր նոր գրողի դէմ դուրս են գալիս գրական ոխերիմ հակառակորդներ, որոնք բար են զլորում նոր տաղանդի առաջ, բամբասում նրան, հալածում, ուզենալով տապալել, մեռցնել նորածիլ տաղանդը և հեռացնել ասպարէզից: Բաֆֆին էլ ենթարկվել է նոյն դրութեան, նա էլ ունեցել է հակառակորդների լէգէօններ թէ տգէտ և թէ կրթված հայ խաւերի մէջ: Բաւական է առաջ բերել հենց իր խօսքերը, որ ասել է պ. Ա. Աւթանդիլեանցին և ընթերցողը կը պատկերացնի երիտասարդ գրող Բաֆֆիի սկզբնական շրջանները. — «Ես այժմ համոզվեցի, որ մեր

երկիրը բնաւ յարմարութիւն չունի գրական գոծիչի և ուսուցչի համար: Չը կայ լաւ շրջան, չը կան կրթիչ և հրահանգիչ հաստատութիւններ, որոնցից մարդս կարողանար օգտվել: Ոչինչ չը կայ նպաստող լաւ տրամադրութիւնն էլ, ինչպէս գիտէք, այստեղ շատ սակաւ կարող է լինել, Երբ ես մտքով խորասուզված եմ լինում մի բան գրելու համար, յանկարծ տեսնում էք, հանգիստս վրդովելով, կտրեցին մտածութեանս թելը, որին այլ ևս չեմ կարող վերադառնալ և նա յաւիտեան կորաւ ինձ համար: Հարկաւոր է լինում մի աջող դէպք, որից ես նոր ի նորոյ ոգևորվեմ, բայց դրա փոխարէն առաջ է գալիս մի թշուառ երևոյթ, մի խայտառակ դէպք կամ մի զրգովելի գործ: Ոչ մի դէպքում հանգիստ չեմ գտնում. ինչ թշուառ եմ ես... Այդպէս է զրած իմ բաղտումս:

Բաֆֆիի ժամանակ հայոց գրականութիւնը դեռ նոր էր սկսել թողնել դարևոր սխօլաստիկ ոգին, կրօնական-վերացական անհեթեթ գաղափարները, դաւանաբանական ջրալի ու անպէտք վիճաբանութիւն-



հայրենիքի, ազգի փառաւոր անցեալով, յուզվում է նրանց սպաւորութեանց տակ ու գրում է բանաստեղծութիւններ, որոնց մէջ նա երգում է ազգի հին ու նոր ցաւերը, անցեալ փառքը, ստրկութիւնն ու հեծեծանքը և երազում է լաւը վերակենդանացնելու մասին արծարծելով իր գրքավածքներում ազգասիրական և եղբայրական գաղափարները:


Ո՞ր հայը չէ լսել «Ձայն տուր ո՞վ ծովակ» յուզող երգը, որ Բաֆֆին գրել է Վանայ ծովակի ափին նստած ժամանակ՝ ազգի փառաւոր անցեալի յիշողութիւնների ազդեցութեան տակ:

Նա շնորհիւ իր թափանցիկ խելքի ու շրջահայեաց մտքի, մտնում է հասարակութեան խաւերը, դիտում ու գննում ժողովրդի ներկայ վարք ու բարքը, սովորութիւնները և տեսնում է, որ դեռ շատ տրգէտ է հայ ժողովուրդը. տեսնում է, որ նրա վարք ու բարքը փչացած է, նիստ ու կացը դէպի վատը փոխված. լսում է հայ ժողովրդի դառն հեծեծանքները ու հարբատահարութիւնները Տաճկաստանում և Պարս-

կաստանում. տեսնում է հայ կուսի բռնաբարվիլը, հայ հոգևորականների կոշուկից ստորանալը, հայի համբակութիւնը մայրենի լեզուի մէջ և այլն... ազգի ցաւերը, և յուզվում է Բաֆֆին, զգացվում. նա մտածում է նոր ծրագիրներ և իդէաներ դնել հայ ժողովրդի առաջ. մանաւանդ հայ ինտելիգենցիայի և երիտասարդութեան առաջ: Ուստի և Բաֆֆու բոլոր գրվածքները սպաւորիչ են:

Տաճկահայոց և պարսկահայոց ողբալի գրութիւնը, հալածանքները, հարստահարութիւնները, սովամահ լինելը, ապա ոռուտաճկական պատերազմը տեմաներ տուին Բաֆֆու վէպերին: Այդ սպաւորութիւնների տակ նա գրել է «Ձալալէղինը», «Նենթը», «Դաւիթ-բէկը», «Սամուէլը», «Վայծերը», «Պամսայի Մելիքութիւնները»...:

Ո՞վ չէ ճանաչում Բաֆֆու հերոսներին — Դաւիթ-բէկին, Մելիք-Փարսազանին, տէր-Աւետիքին, Վարդանին, Որսորդ Աւօյին, Կարօյին, Աւանին, Սագօյին կամ թէ խաչագող բաւոր Պետրոսին և ուրիշներին, որոնցից ամեն մէկը կոչվում է հերոս է և կամ



տիպերը, որոնք մեզանում դժբախտապէս չը կան, բայց որոնց գոյութիւնը ցանկալի է մեր մէջ»...:

Րաֆֆին գործում է գրականական և հասարակական ասպարէզում ամբողջ երեսուն տարի, անընդհատ աշխատելով մայրենի գրականութեան ու լեզուի, ազգային շահերի ու առաջադիմութեան համար. շարունակ մտրակելով ինտելիգենցիայի անգործութիւնը, երիտասարդութեան դատարկութիւնը, հոգևորականութեան գայթակղեցուցիչ յետադիմութիւնը ու անտեղութիւնը, և գրիչը ձեռին հարթում է նոր ճանապարհ՝ առաջադիմութեան ճանապարհ, վէպերի տիպերով և հերոսներով ցոյց տալով իսկական գործիչ լինելու պատկերը և ազգային ինքնազիտակցութեան անհրաժեշտութիւնը...

Ահա Րաֆֆու գրվածքների տենդենցիան, ահա Րաֆֆու գործունէութեան մեծ նշանակութիւնը:

Րաֆֆին կնքեց իր մահկանացուն 1888 թ. Ապրիլի 24-ին, ի մեծ ցաւ և կորուստ հայոց ազգատ գրականութեան. հայ

ազգը յանձին Րաֆֆիի՝ զրկվեց իր առաջնակարգ, տաղանդաւոր վիպագրողից, համամուլը ողբաց իր կորուստը, հառաչեց: Թերթերում գրվեցան նեկրօլօգներ, ճշունձան դամբանականներ: Հայ ժողովուրդը իր մեծ սուգը ցոյց տալու համար սգակառքը և յուզարկաւորութեանը հետևեց մինչև հանգստարան: Հայ հարուստը, որ նրա կենդանութեան ժամանակ չէր ուզում ճանաչել նրան, որ մի գուցէ նրա գրվածքների հրատարակութեան համար փող ծախսէ, նրա մահվան ժամանակ գլխիկոր հետևում էր սգակառքին:

Եւ եթէ Րաֆֆին այն ժամին մի ըուպէ կենդանանար, գլուխը դազաղի միջից վեր բարձրացնէր, սաստիկ կը զարմանար, տեսնելով, որ իր համակրողների թիւը տասնապատկվել է և նոյն իսկ թշնամիներն էլ են գլխիկոր հետևում սգահանդէսին և կ'ասէր. «Կենդանի ժամանակս չէիք ուզում ինձ ճանաչել, քաղցած ժամանակս մի կտոր հաց անգամ չը տվիք, որ ստիպված եղայ բազաղի պրիկաշիկ գառնալ.

«Սալբի», «Զահրումար», «Թաթսաներ», «Մի-
նը այսպէս, միւսն այնպէս», «Մի թերթ
աբեղայի յիշատակարանից», «Հայ կինը և
հայ երիտասարդութիւնը», «Քրդական միու-
թիւն», «Քրդեր», «Աղթամարայ վանքը»,
«Մի քանի գծեր Խրիմեանի կեանքից»,
«Վրաց իշխանագն Ալէքսանդր», «Միրզա-
Մելքում խան», «Ուղևորութիւն Պարսկաս-
տանում», «Թիֆլիսից մինչև Ագուլիս»,
«Մարդը գոյութեան կռուի մէջ», «Ինչ կապ
կայ մեր և թուրքաց հայերի մէջ», «Քանդը-
ված օջախ», «Քնար մշեցոյ», «Գաղտնիք
Ղարաբաղի», «Թիւրքիայի հայոց վիճակը»,
«Սամուէլ», «Փունջ», «Վէպիկներ և պատ-
կերներ» և ուրիշ անթիւ պուբլիցիստական
յօդուածներ զանազան թերթերում: Բաֆ-
ֆին, ինչպէս ասում են, ունի և անտիպ
գրվածքներ, որոնք նրա կենդանութեան
ժամանակ չը տպվեցան:



«Ազգային գրադարան»



NL0377678

29774

71.373

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ

Իմ հեղինակած և թարգմանած գրքերից, որոնց մեծ մասը սպառվել է, կան և ծախվում են միայն հետևեալները:

1. «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական ու ծածուկ ցաւեր), նկարներով, խորհուրդներով և բէյցէպտներով. գինը 50 կոպ.
2. «Տրիպէր (Սուսունակ) և նրա բժշկութիւնը», նկարներով, խորհուրդներով. գինը 20 կոպ.
3. «Կնիկարմատի շալվարը», նոր վօդըվիլ չափահասների համար. գինը 20 կոպ.
4. «Միկնոյն դագաղում», պատմվածք հայ-թուրքական կռիւներից. սպանված դիակոյտերի նկարներով. գինը 7 կոպ.
5. «Սօնայի նշանդրէքը» յայտնի ծիծաղաշարժ վօդըվիլը. գինը 15 կոպ.
6. «Մշտական զօրք և մեկիցիա», Պիմէնովի գինը 5 կոպ.

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին (հատ-հատ ուզողները գիմեն գրավածառներին) դա-կազնօյ բանդէրօրով: Պահանջողները անպայման առաջուց պէտք է ուղարկեն գրքերի արժէքը պոստի մարկաններով և 17 կոպ. մարկայ էլ ճանապարհա-ծախսի համար:

Հասցէս՝ Тифлисе, Медич. фельдшеру Артемію Есаянцу, Семеновская ул. № 9. Գումարով պահանջողներին գեղջ:

891.99.092 ՐԿՔԻԻ

Ե - 58